

նացաւ երկիրս Հայոց: Ապա Բառլահայ ոմն եկեալ յԱլա-
նաց դրանէ, ... սուր ի վերայ եղեալ կոտորէ»:

Յովհաննէս Կաթողիկոսն է համառօտել Սովերքի
աւանդածը թէ՛ Սովերքն է ընդարձակել Յովհաննէս Կա-
թողիկոսի պատմութիւնը. այս բանը պէտք է ճշդել, որ-
պէսզի պարզուի Սուբխասանց, նրանց հետ էլ Ոսկեանց
Վկայաբանութիւնը կազմուելու ժամանակը:

(Կր Շարունակութիւն)

Յուսիկ եպս.

ԳՈՅԳԻ ՀԱԻԱՍՏԱՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն *)

Բ.

ՀԻՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՉՄԸ

1. Հին քրիստոնեական կոմմունիզմի արմատները.

Արդէն առաջինը, որ նախորդ գլխում նկարագրուած դար-
ագումը, որ սրբագործուած էր Աթէնքի օրինակով, բոլոր պե-
տութիւններին և ցեղերին է վերաբերում:

Հետոյմը, աշխարհի կառավարիչը, նոյնպէս չխուսափեց այդ
վիճակից: Նրա ներքին անկումը արդէն մօտեցել էր իւր իրա-
գործման, երբ որ նա իւր արտաքին ոյժի գազաթնակէտին
հասաւ. նրա թագաւորութիւնը, որ Միջերկրական ծովի շրջա-
կայ երկրներն էր բռնում, ներկայացնում էր տէրութիւններ
մի խառնուրդ, որոնք նոյն ճանապարհի վրայ էին գտնուում.
Նրանցից մի քանիսը, որ տարածուած էին Միջերկրականի
արևելեան և հարաւային կողմերը, Հռոմից շատ առաջ գնա-

* Տես Արարատ Թիւ Ժ.

ցին. միւսները, որ ընկած էին հիւսիսային և արեւմտեան կողմերը, յետ էին մնում նրանից, բայց արագ կերպով ձգտում էին հասնել նրան, որին հասել էր մայրաքաղաքը, և դրա հետ միասին այն բանին, ինչի հասել էր արդէն Յունաստանը և նրա հետ միադին արեւելեան երկրները—կատարեալ սոցիալական քայքայման:

Տեսանք, թէ ինչպէս ընկաւ աթենական ազատութիւնը, և ինչպէս հասարակապետութիւնը հատուկացած էր միապետութեան համար: Այդպէս էր ընթանում գործը նաև միւս ռամկավարական պետութիւններում. այդպէս էր գնում նաև Հռոմում: Հէնց նոյն ժամանակը, երբ ծնունց Գրիստոս, Հռոմ մէական հասարակապետութիւնը հոգեւարքի, և կայսրութիւնը առաջին քայլերի մէջ էր:

Այդ ժամանակներում թէ ազնուականները և թէ ռամիկները հաւատար չափով սեղանաբեկներ էին: Ժողովրդի ոյժը, ազատ գիւղական դասակարգը՝ Հռոմէական պետութեան մէջ ընկած էր և շատ տեղ էլ անյայտացած՝ կայսրութեան փառքն ու մեծութիւնը աճեցին գիւղացիութեան աւերակների վրայ: Մշտական պատերազմները, որոնք մղուում էին գիւղացիներից կազմած խմբերով, գիւղական անտեսութիւնը անկման հասցրին, մինչդեռ բոլոր հոգատէրերի անտեսութիւնը, որ ստրուկներին ձեռքով էր կատարուում, անվնաս մնաց:

Ընդհակառակն,—հէնց պատերազմներն էին նրա համար չափաւորանց արժան ստրուկներ ձեռք բերում: Բայց զարմանալի չէ, որ սարկապետական անտեսութիւնը արագ զօրացաւ և ազատ գիւղացիների անտեսութիւնը մի կողմ թողեց: Ինչպէս ձիւնը արևի ճառագայթների տակ՝ հալուում էր ազատ, զօրեղ գիւղական դասակարգը. դա մասամբ աղքատացաւ, մասամբ էլ դարձաւ պրոլետարիատ, այսինքն անգործ ու քաղցած թափառականների խմբեր, որովհետև օրավարձի աշխատանքը, որից կարող էր նա օգտուել, գոյութիւն չունէր մեծ քանակութեամբ: Արդիւնազործութեան, ինչպէս և գիւղատնտեսութեան մէջ ստրուկների աշխատանքն էր թաքաւորում: Մանկացած գիւղացիք մեծ քանակութեամբ ցրուեցան մեծամեծ քաղաքներ, որտեղ նրանք սանձարձակ անտուն մարդկանց հետ կազմում էին բնակչութեան ամենաստոր դասակարգը:

Բայց քանի որ գոյութիւն ունէր ռամկավարական հասարակապետութիւն, ամբոխի աղքատանալը դժբախտութեան ծայրահեղ աստիճանը չէր կազմում: Ամբոխը եթէ ամեն բանից զրկուած էր, գոնէ մի բան ունէր, քաղաքական իրաւունք և

կարող էր ապրել այդ իրաւունքով: Նրանք կարողանում էին խիստ բազմատեսակ միջոցներով օգտուել հարուստներից և շահագործել հարկատու հպատակ նահանգները:

Քաղաքական իշխանութիւնը նրանց ոչ միայն հաց և տնտարաններ էր հայթայթում, այլ երբեմն նաև արտահանութեան միջոցներ — հողային սեպհականութիւն: Հռովմէական հատակապետութեան վերջին դարերի ընթացքում գիւղական հատ ստեղծելու մի շարք փորձեր ենք տեսնում թաւիառաշրջիկներին հողեր բաժանելով:

Բայց տնտեսական զարգացման անիւը շրջելու բոլոր ջանքերը ի դուր անցան. նոցա արգելք էին լինում իրանց քաղաքական և տնտեսական գերիշխանութեամբ այն գիւղացիները, որոնք ինչքան կարելի է, խանդարում էին նոցա իրագործումը, իսկ որանդ յաջողուում էր այնուամենայնիւ գիւղացիներին տղատել, նորից արագութեամբ ճնշում էին վերջիններիս և սոցա հողերը գնում: Նոցա իրագործման յաջողութիւնը գծուրանում էր նաև այն հանգամանքի շնորհիւ, որ պատառաբոյժ դատակարգը իւր անբարոյականութեամբ չէր կամենում աշխատել և լաւ էր համարում թաւիառել քաղաքում, քան գիւղում աննշան գիւղացու աղքատ և վաստակաւոր կեանքն ունենալ: Պատառաբոյժները սոցիալական վերանորոգութիւններին յաճախ արգելք էին լինում նրանով, որ առանց երկար մտածելու վատնում էին իրանց ձեռքն ընկած գոյքերը. բայց յաճախ էլ արգելք էին լինում այնպիսի ձևով, որ իրանց քաղաքական իշխանութիւնը վաճառում էին խոշոր հողատէրերին, և դրանք էլ գործադրում էին այդ սոցիալական վերանորոգիչներին դէմ:

Սոցիալական վերանորոգութեան այդ ջանքերից ամենավիթխարիները մտածեցին և յառաջ տարան Գրաքեանները, Տիբերիոս Սեմպրոնիոս Գրաքեանը (ծն. 163 թ. ն. ք. Գ.) և աւելի վճռական կերպով Վալոս Սեմպրոնիոս Գրաքեանը (ծն. 153 թ. ն. ք. Գ.), որ իւր եղբօր գործը շարունակեց, և ինքն էլ, ինչպէս նա, լատիֆունտիաների *) տէրերի կատաղութեան զոհ գնաց: Նրկու եղբայրներին էլ կոմմունիստ անուանեցին. բայց բոլորովին ճիշտ չէ այդ: Նրանք ոչ թէ մասնաւոր սեպհականութիւնը ոչնչացնելու են ձգտել, այլ ստեղծելու նոր սեպհականատէրեր,

*) Լատիֆունտիաները ահապին տարածութեամբ հողեր էին, գնում և հարուստ ընտանիքների ձեռքով ժողովրդից կամ պետութիւնից հասարակապետութեան վերջին շրջանում, Ծ. Թ.

հիմնաւոր գիւղացիութիւնը, իբրեւ մասնաւոր սեպհականութեան ամենահաստատուն յենարան վերականգնելու համար: Նրանք գործում էին բոլորովին իրանց ժամանակաւոր տնտեսական յարաբերութիւնների մտքով: Ճշմարիտ է, այն ժամանակ ոչ միայն բոլոր հողագործութեան տեղի էր տալիս մանրը, այլ և խոշոր արգիւնաբերութեան՝ մանր արգիւնաբերութիւնը: Քայքայ դա ոչ թէ բոլոր տնտեսութեան և արգիւնաբերութեան մասնագիտական և տնտեսագիտական գերազանցութեան հետեւանք էր, այլ նրա գործող ոյժերի՝ ստրուկների չարահալանց արժանութեան:

Մշտական պատերազմները շուտափոյթ հասցնում էին շատ պատերազմական գերիներ, ստրուկներ: Հռովմէական պատերազմների մեծ մասը խոշոր հողատէրերի արժանագին գերիներ ձեռք բերելու պահանջ էր— լուի ստրուկների որսորդութիւն:

Ժողովում էին ստրուկների ահագին խմբեր. զարմանալի չէ, որ նրանց դները չափազանց իջան: Դեռ ևս Աթէնքում նման հանգամանքների պատճառով ստրկութիւնը խիստ զարգացաւ: Դեռ 300 տարի Քրիստոսից առաջ այնտեղի բնակիչների թիւն էր 21000, ստրուկները 400000: Էսքիլէսի մասին ասում են, իբրեւ նրա բացառակի աղքատութեան ապացոյց, որ նա միայն եօթն ստրուկներ ունէր: Հռովմէական պետութեան միջ ոտըրկութիւնը աւելի լայն չափեր ընդունեց: Հռովմէացի Նենտալ գնդապետը (մօտ 60 թ. ն. ք. Ք.) պատերազմական գերիներին մէկը մի մանէթի ստրուկ էր վաճառում: Այժմ ոկսուեց շահագրգիռ դառնալ մեծամեծ խմբերով ստրուկներ հաւաքելը և բանեցնելը— հարուստ Հռովմէացիք հազարներով ունէին: Մանր արգիւնաբերութեան փոխարէն շինում էին խոշոր ագարակներ— սովորական ձեով ասած— գործարաններ: Սակայն այդ անունը չի յարմարւում Հռովմէացոյց և Յունաց խոշոր արգիւնաբերական ձեռնարկութիւններին: Նրանք բոլորովին այնպիսի բնաւորութիւն չունէին, ինչ որ մեր ժամանակուայ ձեռագործարաններն ու գործարանները. նրանք մանր արգիւնաբերութիւններից բարձր չէին, ինչպէս այս վերջինները:

Արգիւնագործութեան խոշոր գործողութիւնն ստրուկների աշխատանքի վրայ է հիմնուած, չի կարելի այդ գործարաններին հաւասարեցնել. եթէ արդէն մեր ժամանակակից երեոյթները վերցնենք, շատ-շատ կարելի է նմանեցնել բանտարկեալների աշխատանքին բանտերում: Այդ չի պնդել, որպէս թէ կալանաւորների աշխատանքը աղատ արհեստաւորների աշխատանքի համեմատութեամբ արտահանութեան համեմատաբար

աւելի բարձր ձև է: Ստրուկներն աշխատանքը, մանաւանդ գիւղական աշխատանքի մէջ, ինչքան կարելի է երեւակայել, կոպիտ և հակադիտական բան է եղել^{*}): ստրուկը խոշոր աշխատանքի ժամանակ աւելի քիչ էր արտադրում, քան բանորրը սակաւ

^{*}) Մարկսը իւր «Կապիտալի» մի նկատողութեան մէջ ստրուկների աշխատանքի մասին ասում է. «Նախնեաց յաջող արտադրութեամբ ստրուկները այստեղ (ստրկական աշխատանքի մէջ) իբրեւ ձայնաւոր գործիքներ՝ տարբերում են անասուններից՝ իբրեւ կիսաձայնաւորներից: Եւ աննշան առարկաներից՝ իբրեւ համր գործիքներից: Բայց ինքը ստրուկը զգալ է տալիս, որ ինքը աշխատանքի կենդանուց եւ գործիքներից տարբեր է—նա մարդ է: Նա իւր մէջ հաստատում է իւր նրանցից ունեցած տարբերութիւնը նրանով, որ ինչքան կարելի է, վատ է վարում նրանց հետ եւ ատելութեամբ փչացնում է նրանց: Այդ պատճառով արտահանութեան այդ միջոցի համար իբրեւ տնտեսական սկզբունք ծառայում է աշխատանքի համար անճշունի կոպիտ գործիքների գործածութիւնը. եւ այդ գործիքները դժուար է փչացնել նրանց հաստացելութեան պատճառով (K. Mark. das Kapital, I. 2 Aufl. էջ 185): Հետաքրքիր է այդ խօսքերի հետ համեմատել հետեւեալ բնութագրութիւնը, որ գտել ենք Միամանդու «Etude sur l'economie politique»-ում (Փարիզ 1857): Նա Շ. Կոնտի (C. Conte) «Ստրկութեան մասին» երկասիրութիւնից մի երկար քաղուածք է բերում եւ ի միջի այլոց ասում. «Մեր ժամանակուայ ստրուկները ընդունակ չեն ոչ մի աշխատանքի, որ խելք, ճաշակ եւ ջանք է պահանջում: Հաւանականաբար հոռովմէական հնութեան զեղեցիկ ձեւագործները պատրաստում էին այնպիսի մարդկանց ձեռքով, որոնք իրանց արդիւնագործական հմտութիւնը արդէն ձեռք բերած են եղել եւ պատերազմի պատճառով միայն զերի ընկել: Յիրաւի, երբ որ ստրուկ զարգրին Հոռովմէացիք բոլոր արդիւնագործ գեղերին, այնպէս որ բարբարոս գեղերի մէջ կարող էին միայն սարուկ գտնել, արուեստն ու արդիւնագործութեան խոշոր տեսակները նրանց մէջ արագութեամբ ընկան եւ իրանք էլ բարբարոսութեան մէջ ընկան: Սակայն ստրկութիւնը ոչ միայն ստրուկներին է փչացնում, այլ եւ ազատներին, որովհետեւ նա ծնեցնում է դէպի արդիւնաբերութեան աշխատանքը այն արհամարհանքը, որ տեղի եւ աւելի է հեռացնում ազատներին արդիւնագործութեանը զբաղուելուց: Հոռովմէական հատարակապեւութեան մէջ պատառարոյծների դրութիւնը, որոնց ամեն տեսակ աշխատանքից հեռու էին պահում մասամբ արհամարհանք դէմով աշխատանք, մասամբ էլ մրցում ստրուկների հետ, օտարացնում եւ խեղճութեանց ամենայայտնի եւ սարսափելի օրինակն է համարում, որի մէջ է ձգում ստրկութիւնը ժողովրդի մի մասին, որ ոչ տէր էր, եւ եւ ոչ ծառայ (I. էջ 582—595):

ւով: Բայց եթէ ստրուկը աւելի խոշոր արդիւնաբերութեան մէջ այնուամենայնիւ աւելի արժան էր արտահանում, այդ միայն նրա համար, որ նա գրեթէ ոչինչ չարժէր, և ստրուկներին առատութեան և արժանութեան պատճառով կարիք չկար նրան խնայելու, կերակրելու և հագցնելու, ինչպէս որ պէտք է: Եթէ ստրուկները կորչէին էլ, նրանց տեղը դանուում էին բաւականին ուրիշ ստրուկներ:

Այդ ձևով Հռոմէական պետութեան մէջ փոքր արտահանութիւնը տեղի էր առնում մեծին ոչ թէ այն պատճառով, ինչ պատճառով նոյն երեւոյթը կարող էր յառաջ գալ ներկայումս: Այն ժամանակ բացի մանր տեսակներից (երկրագործութիւն, արհեստ) գոյութիւն չունէին արտահանութեան աւելի բարձր տեսակի նախադրուչացուցիչ պայմաններ, որոնք հիմնուած են ընկերական սկզբունքների վրայ (genossenschaftliche production):

Եթէ Գրաքեանները, իբրեւ ծոյլերի ներկայացուցիչներ՝ աւելի քիչ կոմմունիստներ էին, այդ լիովին համապատասխանում էր այն տնտեսական պայմաններին, որ նրանց ժամանակ կային: Ինչ որ Գրաքեանների մասին առաջինք՝ նոյնը կարելի է ասել և Վատիլինայի (ծն. 108 Քր. առ.) խոշոր հողատէրերի դէմ արած ցոյցի (դաւադրութեան) ղեկավարի վերաբերմամբ: Նա, երբ որ նրա ընկերների իշխանութիւն ձեռք ձգելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան՝ ստիպուած եղաւ իւր ընկերներով հանդերձ բացարձակ իշխանութեան դիմել և հերոսականութիւն մէջ ընկաւ իւր հակառակորդների դերազանց ոյժից (62 թ. Քր. ա.): Նրան էլ կոմմունիստների շարքը դասեցին — Մոմզէնը և «անիշխանականների» մէջ, — սակայն առանց որ և է հիմունքի: Վատիլինայի համար էլ գործը նոյնքան մասնաւոր սեպհականութեան ոչնչացման և հաւասար հասարակական կազմակերպութիւն մտցնելու մասին էր, ինչքան և Գրաքեանների համար: Նա ձգտում էր իշխանութիւնը չունեւորների ձեռքը ձգել, որպէս ղի նրանց դարձնէ ունեւոր:

Պատառաքոյճների և նրանց ընկերների մտքերը ուրիշ ուղղութիւն ստացան, երբ քաղաքական կեանքը մեռաւ, և երբ որ չունեւորները քաղաքական և բարոյական տեսակէտից այնպէս ընկան, ինչպէս և ունեւորները. ռամիալարութիւնը այնպէս անհիմն դարձաւ, ինչպէս և ազնուականութիւնը, ճանապարհ բացուեցաւ միապետի, ինքնակալի, կայսեր, վարձկանների խումբերի և վերաճնուող դիւանագիտութեան հրամայողի համար:

Քաղաքան իշխանութեան հետ անյայտացաւ հին բանուորի աշխատանքի կարեւորագոյն, մինչև անգամ միակ աղբիւրը: Խեղ-

ճութիւնը այժմ աղքատութիւն էր նշանակում: Գոյքի վատ-
նումը ժողովրդական խաւերի կողմից՝ առաջ բերեց հռովմէա-
կան հասարակապետութեան մէջ ամենաոտարտաիւլի, առաջ
չ'տեսնուած երեւոյթներ: Մուրողութիւնը, խմբերի աղքատու-
թիւնը և բաղմութեան թշուառութիւնը այժմ դարձան ամենա-
կարեւոր սոցիալական հարց—մի հարց, որ աւելի համապատաս-
խան կերպով էր պահանջում իւր վճիռը, որովհետեւ համայնա-
կան զարգացումը գնում էր իւր ճանապարհով, մինչ խաւերը
աւելի և աւելի էին ընկնում, հարուստները հետզհետէ հարստա-
նում էին, չունեւորների թիւը հետզհետէ աճում էր:

Բայց դա միակ սոցիալական հարցը չէր, որ ալէկոծում էր
Հռովմէական պետութեան հասարակութիւնը: Ազատ գիւղա-
ցիութեան անկումը, որ տանում էր դէպի կայսերական բա-
ցարձակութիւն, ամբողջ համայնքի տնտեսական անկման նա-
խորդեց:

Իւր քաղաքական անկումից առաջ Հռովմէական պետու-
թիւնը ղինուորական տեսակէտից ընկաւ: Գիւղացիների հետ
անյոյտուցան անկոնոն զօրքի ղինւորները: Նրանց տեղը բռնեց
վարձկանների զօրքը, բռնապետութեան ամենազօրեղ յենա-
րանը: Սակայն այդ զօրքը, որ անընկճելի էր երկրի ներսը, շու-
տով ցոյց տուեց, որ դժուարութեամբ էր կարող յետ մղել
արտաքին թշնամուն, այսինքն Գերմանացւոց, որ առաջ էին
խաղում հետզհետէ աւելի և աւելի եռանդուն կերպով, մինչ-
դեռ Հռովմէական պատերազմական ոյժը նկատելի կերպով
ընկնում էր:

Այդ բանը տնտեսական կարեւոր հետեանք ունեցաւ. տի-
րապետութեան պատերազմները աւելի և աւելի քչացան.
մշտական պատերազմը, որ մղւում էր սահմաններում, հետըզ-
հետէ աւելի և աւելի էր զուտ պաշտպանողական ընաւորու-
թիւն ստանում, որ աւելի ղինւոր էր կորցնում, քան ստրուկ
ձեռք բերւում: Ստրուկների հոսանքը առաւելանալու կը ճատ-
ուումէր: Բայց ստրուկների առատ հոսանքի դադարման հետ այն
ժամանակուայ խոշոր արդիւնաբերութիւնը—այսինքն գիւ-
ղատնտեսութեան հիմքն էր ընկնում: Հէնց ստրուկութիւնը
չ'դադարեց լիապէս, սակայն հետզհետէ դառնում էր ճոխու-
թեան առարկայ:

Սակայն դա չէր նշանակում ազատ գիւղացիութեան և
ազատ արհեստներին դառնալ: Արդիւնադործութիւնը մեծ
մասամբ ստրուկների ձեռքին էր մնում. միայն ստրուկների
կըճատումն բաւական չէր, որ արհեստաւորները ազատ, զօրեղ

դասակարգ կազմուի. այդ առաւել ևս տանում էր գէպի ար-
դիւնագործութեան անկումն: Սակաւ ինչ լաւ էր գիւղատըն-
տեսութեան գործը: Ազատ գիւղացիները կորչում էին սարուկ-
ների աշխատանքի պատճառով, իսկ որտեղ նրանք կորչում էին
չնայած անհատական պետութեան մէջ, այնտեղ գիւղատնտեսութիւնը
չէր կարողանում արմատներ արձակել: Որովհետեւ թէպէտ խո-
շոր արդիւնաբերութիւնը աւելի քիչ շահաւէտ էր դարձել,
խոշոր հողատիրութիւնը դեռ մնում էր: Դեռ այդ բաւական
չէր. հողատիրութիւնը աւելի ևս ընդարձակուում էր, որովհետեւ
խոշոր հողատէրերը գոնէ մանրերից աւելի լաւ էին գիմանում
առտիճանաւորների կեղեքման և այն աւերածութիւններին,
որոնց ենթակայ էին շատ ներքին երկիրներ առանձնապէս ան-
յաջող պատերազմների պատճառով:

Բայց հողատիրութիւնը արդէն չէր կարող խոշոր արդիւ-
նաբերութիւն պահպանել: Արտահանութիւնը հետզհետէ կըր-
ճատուում էր և զրա հետ միասին զարգանում էր բոլոր կալ-
ուածների ամբողջովին կամ մաս—մաս մանր կալուածների
բաժանուիլը: Կալուածները որոշ պայմաններով տրուում էին
այսպէս կոչուած գաղութներին, որոնց, մանաւանդ տէրու-
թեան վերջին դարերում, աշխատում էին, ինչքան կարելի է,
կապել հողի հետ: Դրանք միջնադարեան ճորտերի նախորդ-
ներն էին:

Այդ հողերի հետ կապելու պատճառը բանւոր ոյժերի
նուազումն էր պետութեան մէջ: Բաղմաթիւ հարուստների, և
գիւղացիական երկրագործութեան և արհեստների խղճալի մնա-
ցորդներով զբաղուող ազատ բանւորների համեմատաբար
սակաւ թուի հետ՝ բնակչութեան մեծամասնութիւնը բաղկա-
ցած էր օրավարձ պատառաբոյժներից և ստրուկներից: Այդ
խաւերը մեծ մասամբ տալեւով առանց կանոնաւորուած բն-
տանեկան յարաբերութիւնների և գտնուելով ամենաժանր
պայմաններին մէջ, չկարողացան բնակչութեան տալ որոշ չափա-
ւոր աճում: Բաղմաթիւ անյաջող պատերազմները աւելի ևս
սաստիկացրին մարդկութեան նուազումը: Բնակչութիւնը զգալի
կերպով քչանում էր: Գաղթականներ և զինւորներ ձեռք բերելու
համար պետութեան տիրող դասակարգերը պէտք է հետզհետէ
գէպի իրանց գրաւէին օտարերկրացիներին և բարբարոսներին.
պետութեան պաշտպանութիւնը և պահպանութիւնը վերջի
վերջոյ մնաց այդ օտարերկրեայ գաղթականներին և նոցա
սերնդին:

Բայց բաւական չէր այդ բնակչութեան պակասը լցնելու

համար և հարկաւոր էր գրաւել աւելի կոպիտ և ստոր դասակարգեր:

Հռովմէական քաղաքակրթութիւնը կարող էր իւր բարձրութեան հասնել լոկ իւր տրամագրութեան տակ ունեցած բանւոր ոյժերի առատութեան շնորհիւ, որ և կարող էր նա համարձակ վատնել: Բանւոր ոյժերի առատութեան հետ միասին չքանում էր նաև նիւթերի առատութիւնը. հողագործութիւնը և արդիւնագործութիւնը ընկնում էին, դառնում աւելի և աւելի կոպիտ և բարձարոճական: Եւ նրանց հետ միասին ընկնում էին արհեստներն ու գիտութիւնները:

Այդ հասարակական անկումը ժամանակի երկարատև շրջան էր ըսնում: Մի քանի դար անցաւ, մինչև որ Հռովմէական պետութիւնը իւր այն հպարտ բարձրութիւնից, որին հասել էր Օգոստոսի և նրա առաջին յաջորդների ժամանակ, իջաւ այն ստորին մակերևոյթի, որին հասել էր ազգերի դաղթի սկզբում: Բայց այդ անկման ուղղութիւնը որոշ էր մեր տօմարի առաջին դարում և մի քանի կէտերով արդէն կարելի էր այն ժամանակ պարզ կերպով տարբերել: Նրա հետ և նրա շնորհիւ ծագեց նոր հասարակական մի ոյժ, որ ընդհանուր անկումից աղաթեց այն, ինչ որ կարելի էր դեռ ևս ազատել և Հռովմէական քաղաքակրթութեան մնացորդները վերջապէս տուեց Գերմանիային, որտեղ նա նոր, բարձր քաղաքակրթութեան համար ճանապարհ դտաւ:

Այդ ճանապարհը քրիստոնէութիւնն էր:

(Շարունակելի):

Թարգ. Ի. Ս.